## ԲԱՏԻԿՅԱՆ (ԱՆՑՅԱԼՈՒՄ ՔՅՈՍԱ ՄԱՀՄԱԴ, ՀՆՈՒՄ՝ ԳԱՆՁԱԿ)

*Ինչպես այս գյուղի, այնպես էլ մոտակա գյուղերի XVI դարի արձանագրությունների մեջ գյուղը կոչվում է Գանձակ։ Տեղագրող հեղինակները, ըստ երևույթին, իրավացի են վարվել, նույնացնելով այն Ստ. Օրբելյանի հիշատակած Գանձաղանտառ գյուղի հետ։*

*Թեև գյուղում պահպանված արձանագրությունները միայն XVI դարից են, բայց գյուղամիջի սբ. Գևորգ եկեղեցին իր ճարտարապետական ոճով և շինարարական տեխնիկայով պատկանում է Գեղարքունիքի IX դարի վերջերին կառուցված հուշարձանների խմբին, հատկապես Նորադուզի եկեղեցուն։ Ս. Գևորգը նախապես եղել է գմբեթավոր սրահ, որի փլած կտուրը ալաշկերտցի նորաբնակ գաղթականները XIX դարի վերջերին ծածկել են գերաններով։*

*Բացի ս. Գևորգ եկեղեցու շրջապատում եղածներից, երկու արձանագրություն էլ կա գյուղի հյուսիս-արևելյան եզրին գտնվող «Խաչեր» կոչվող ավերակների մեջ։ Այստեղ կան մի եկեղեցու և մատուռի հիմնապատերը։ Մատուռի մեջ կանգնած են չորս խաչքար, որոնցից երկուսի վրա կան արձանագրություններ։*

*Նախկինում այս գյուղը եղել է Աղարյանների մելիքական նստոցը, հետագայում նրանք տեղափոխվել են Նորադուզ։*

*Այս գյուղից ներկա ժողովածուում ամփոփված են 27 արձանագրություն, որոնցից միայն հինգն են հրատարակված։*

**321.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, մեծ (երկար. 2,15 և լայն. 1,15), գտնվում է ս. Գևորգ եկեղեցու ներսում, հարավային պատի տակ, նախնական տեղում։ Երեսին գծագրված է ննջեցյալ. ունի 5 տող.*



ԹՎ.։ՋԿԲ։(1513) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱԶԱՐԻ|[Ի]Ա, ՈՐ ԷՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱ-|ՆՁԱԿԻՍ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ։|ԵՍ ԳՈՒՆԴՈՒԶՍ Կ|ԱՆԿՆԵՑ[Ի] ՋՏԱՊԱՆՍ։

*Հրատ. Շահխաթունեանց, II, 241, Ալիշան, 42, Սմբատեանց, 501, Լալայան, Ազգ. հանդ. XVIII, 123. Լուսաճկ. 94*

**322.** *Ս. Գևորգ եկեղեցու հյուսիս-արևմտյան մույթի արևելահայաց երեսին, հաշորդից ներքև, նույն ոճի գրչությամբ, 6 տող.*



ԵՍ ՄԱՏԹԷՈՍ Է|ՐԷՑՍ ՈՐ|ԳՈՄՆ ՇԻՆ|ԵՑԻ ՅԻՇ|ԱՏԱԿ ԻՆՁ, ԾՆ[Ո]Ղ[Ա]Ց ԻՄ։

*Ծանոթ. Գրչությամբ և բովանդակությամբ առնչվում է նախորդների հետ և ժամանակակից է նրանց՝ XVI դարի առաջին քառորդ։*

*Անձնանունը կարելի է նաև ՄԱՐՏԻՐՈՍ վերծանել, ինչպես ունեն հրատարակիչները, բայց և ԳՈՄՆ-ի փոխարեն ՋՈՐՄՆ։*

*Հրատ. Սմբատեանց, 501, Լալայան, XVIII, 122.*

**323.** *Ս. Գևորգ եկեղեցու հյուսիս-արևմտյան մույթի արևելահայաց երեսին, անարվեստ գրչությամբ ու խմբագրությամբ, 7 տող.*



ԵՍ ԿՈՒՆՏՈՒԶՍ, ԻՄ ՈՐԴԻՔՆ, ՄԵՔ|ԳԱՆՁԱԿԱՑ ՄԵԾ|ՈՒ ՓՈՔՐ՝ ՇՐՃԱՑ¦ՊԱՏԻ ԴՌԱՆ ԳՈՄՆ/ԻՐ ԿԱԼ.Վ.Ն՝ ՏՎԻՆՔ ԵԿԵՂ.ԵՑՈՑՍ ՎԱԽՄ. ԽՑԵՐՆ։

Ծանոթ. Կունտուզը *Ազարիայի որդին է ու հաջորդը. գրված պետք է լինի Նախորդից քիչ հետո, XVI դարի առաջին քառորդում։*

*Վատ խմբագրված արձանագրության իմաստը հետևյալն է. գյուղի առաջնորդ Գունտուզը իր որդիների և գյուղացիների օժանդակությամբ շինել կամ նորոգել են բակի պարիսպը և խուցերը։ Եկեղեցուն մոտ գանըվող գոմն ու կալատեղը նվիրել են եկեղեցուն։*

*Հրատարակիչների մոտ տարբեր սխալներով է վերծանված։*

*Հրատ. Ջալալեանց, II, 124։ Ալիշան, 42։ Սմբատեանց, 501։ Լալայան, XVIII, 122։*

**324.** ***ԽԱՉՔԱՐ,*** *մեծ, գեղաքանդակ, կանգնած է ս. Գևորգի բակի արևելյան մասում, մուտքի մոտ. քիվին և ճակատի ներքևի շրջանակների վրա 3 տող.*



ԵՍ ՄԷԼԻՔ ՊԱՐԷՔ ՇԻՆԻ, ՏՎԻ ԽԱՉՍ|ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ՄԵԼՔՈՒՄԻՆ.| ՈՒՍԷՊԿԱՁՄԵՑ. ԵՍ ՁԷՄ ԱՐԺԱՆ։

Ծանոթ. Մելիք Պարէքը *վերև հիշատակված Ազարիայի թոռ և Գունդուզի որդին է. արձանագրությունների մեջ հիշատակված է 1549—1555թթ.։*

Լուսանկ. 95

**325.** ***ԽԱՉՔԱՐ,*** *փոքր, ագուցված է ս. Գևորգի արևմտյան պատի մեջ, արտաքուստ, նորոգումների ժամանակ. տակին 1 տող.*



ԹՎ.:ՋՂ:(1541):

**326.** ***ՆՐԵՍՊԱՏՄԱՆ*** *հին բեկոր, ագուցված է ս. Գևորգի հարավային պատի, ստորին մասում, արտաքուստ, թեք գրությամբ, թերի սկզբից և վերջից 5 տող.*



ԹՈՒԻ|Ս:ՉԳ:(1254) · · ·

Լուսանկ. 96

327. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ բեկոր, ընկած է բակի արևելյան մուտքի մոտ, 1 տող.

Ի ԹՎ ՌԲ

Ի ԹՎ.: ՌԲ: (1553):

328. Ս. ԳԵՎՈՐԳԻ հյուսիսային մուտքի արևելյան կողին, խաչի տակին, 3 տող.

ՍԲ ԽՄ ՐԷ
ՏՐ ՋԳԱՐԻՆ
ԹՎ ՌԻԴ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է|ՏՐ ՋԳԱՐԻՆ.|
ԹՎ.: ՌԻԴ: (1575):

Ծանոթ. ՋԳԱՐ անձնանունը անսովոր է. Թերևս ՋԻԳԱՐ պետք է հասկանալ կամ ՋԱՔԱՐ:

329. Ս. ԳԵՎՈՐԳԻ հյուսիսային պատին, տրաաքուստ, փոքր խաչքարի վրա, 3 տող.

ՄԱՍ ԹՈՐԱՏԻՆ
ՆԵՐՍԷՍԻՆ
ԹՎ ՌԽԴ

ՄԱՍ ԹՈՐԱՏԻՆ,|
ՆԷՐՍԷՍԻՆ|.
ԹՎ.: ՌԽԴ: (1595):

330. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, երկու երեսներին խորաններ՝ մեջը խաչեր. հարավային երեսի վերևում 1 տող.

ՄԽԱՉՄԱՐԷԽԱ ԱՎԱՆԷՍԻՆ Թ ՌԽԹՔԻՐԱՍ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[ԻՍ] ԱՎԱՆԷՍԻՆ. ԹՎ.: ՌԽԹ: (1600). ՔԻՐԱՄ:

Ծանոթ. Քիրամը հայտնի կազմող է:
Գտնվում է բակի արևելյան մասում:

331. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, երկու երեսներին խորաններ, գտնվում է նախորդի մոտ. հարավային երեսին 2 տող.

ԱՅՍ Է ՀԱԳԻՍՏ ՆԻԿՕՂՈՍԻՆ ԹՈՄԱԻՆ
ՍԲ ԽԱՉՄԱՐԷԽԱՍԱԳ ԻՍԻՆԵՒՐՆՆՋՈՑ ԷՑԵԼ +

ԱՅՍ Է ՀԱ[Ն]ԳԻՍՏ ՆԻԿՕՂՈՍԻՆ, ԹՈՒՄԱԻՆ|ՍԲ. ԽԱՉՍ
ԲԱՐԷԽԱ[ԻՍ] ՍԱՐԳԻՍԻՆ ԵՒ ԻՒՐ ՆՆՋԵՑԵԼ[ՈՑ]:

Ծանոթ. Քանդակների և գրչության ոճը նույնպես Քիրամ կազմողինն է:

332. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ընկած է բակի հարավային մասում. վրան 2 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐ ՂԱՐԱ
-ԷՏԻՆ ԹՎ ՌՃԻԲ ԷՐ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐ. ԿԱՐԱ[ՊԵ]ՏԻՆ.
ԹՎ.: ՌՃԻԲ: ԷՐ (1673):

333. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին գավազան և 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱ⌊Ն⌋ԳԻՍՏ ՏՐ. ՅՈՀԱՆՆԻՆ.|ԹՎ. : ՌՃԽԵ: ԷՐ (1696):

Լուսանկ. 97

334. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է բակի հարավային մասում. վրան 2 տող.*




ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԷՎԷԼԻՆ | ԹՎ.:ՌՃԾ:(1701):

335. *ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է ս. Գևորգի հյուսիսային պատի մեջ, արտաքուստ, վրան 2 տող.*



ԱՅՍ Է ՄԱՍՆ|ՀՈՒՌՈՒՄԻՆ:

Հրատ. *Լալայան,* XVIII, *122, ունի և թվ. ՌԽԴ*

Լուսանկ. 98

336. *ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է ս. Գևորգի հյուսիսային պատի մեջ, արտաքուստ.*



ԱՅՍ Է ՄԱՍ ՀՈՒՐԻԱ:

Ծանոթ. XVI—XVII *դարեր:*

Լուսանկ. 99

337. *Ս. ԳԵՎՈՐԳԻ հյուսիսային պատի արևելյան խորշի կողքին, 4 տող.*




ՍԲ. ԽԱ|ՉՍ ԲԱՐԷ|ԽԱՒՍ Է ՏՐ. ԹՈՒՄԻՆ:

Ծանոթ. *Մնացած տառերը միտք չեն կազմում:*

338. *Ս. ԳԵՎՈՐԳԻ արևելյան պատի կենտրոնական մասում, խաչերի կողքին, 5 տող.*




ՍԲ. ԽԱՉՍ| Բ⌊ԱՐԷԽԱՒՍ⌋ Է ԲԱՐ|ՍԵՂԻՆ,|
ՀՈՒՌՈՄ⌊Ի⌋Ն:

Ծանոթ. XVI—XVII *դարեր:*

339. Ս. ԳԵՎՈՐԳԻ հյուսիսային պատի կենտրոնում, արտաքուստ. 1 տող.




Ա⌊Յ⌋Ս Է ՄԱՍ ՀՈՒՌՈՄԻՆ:

Ծանոթ. XVI—XVII դարեր։

340. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է ս. Գեորգի արևմտյան պատի մեջ, արտաքուստ գլխիվայր. վրան 2 տող.




ԿԱ⌊Ն⌋ԿՆԵՑԱ.Ի ԽԱՉՍ|ԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՑ ԱԻԱՔԻՆ:

Ծանոթ. Վերջին չորս տառերը կողքին, XVI—XVII դարեր։

Լուսանկ. 100

341. Ս. ԳԵՎՈՐԳԻ ներսում, հյուսիսային պատի վրա, խաչի կողքին 5 տող.




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ|ՏՐ ՏՐՈՒՆԻՆ,
ԾՈՎԻՆԱՐԻՆ:

Ծանոթ. ՏՐՈՒՆ անունը հնարավոր է այլ կերպ վերծանել։
XVI—XVII դարեր։

342. Ս. ԳԵՎՈՐԳԻ հյուսիսային պատի արևելյան անկյունում, մի քարի վրա, արտաքուստ, 3 տող.




ՍԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՑ|ԳԼՈՒԽԻ ՆՈՐՈ|ԳՈՒԹԻԻՆ 1910 ԱՄԻ:

343. ԱՎԵՐԱԿ ԵԿԵՂԵՑՈՒ մեջ որպես վեմ քար՝ գրված հուշարձանի երեսին, 9 տող.




ԿԱՄԱԻՆ|ԱՑ. ԵՍ ՎԱՐ|ԴԱՑ ՏԻԿԻՆ| ՆՈՐՈԳԵՑԻ|
ՋԽՈՐԱՆՍ. Հ⌊Ի⌋Ն⌊Գ⌋Շ⌊Ա⌋Բ⌊Ա⌋Թ, ԱԻՈՒՐ|ՊԱՏԱՐԱ|ԳՆ
ԻՄ ԼԻՆԻ. ԿԱ|ՏԱՐԻՉՔ Ս⌊Ի⌋Ր⌊Հ⌋ՆԻՆ ՑԱՑ:

Ծանոթ. Ավերակ եկեղեցին գտնվում է գյուղամիջի «խաչեր» կոչվող հին գերեզմանատան մեջ։

Գրչության ոճը նման է ս. Գեորգի հին արձանագրությունների ոճին. համարում ենք XVI դարի։

**344. Ս. ԳԵՎՈՐԳԻ** *հյուսիսային պատի սալքին մասում, արտաքուստ, նորոգումների ժամանակ ագուցված տապանաքարի վրա.*



Ծանոթ. *Գրչության տեխնիկան և ոճը XVI—XVII դարերի է, անշուշտ անձնանուն է, թերևս նաև ազգանվան հետ միասին. ինչպես էլ վերծանվի, միշտ ենթադրական կմնա։ Դնում ենք որպես փակագրության նմուշ միայն։*

**345. ԱՎԵՐԱԿ ԵԿԵՂԵՑՈՒ** *մոտ, նույնպես ավերակ մատուռի մեջ գտնվող չորս խաչքարերից երկուսի վրա կան արձանագրություններ.*

ԿԱ̄ՆԵՑԱՒ Ս̄ԲԽԱՉԵՐՍԲԱՐԷԽԱՒՍ ՍԱԶ
ԱՐԻՆ
ԱՆՆԻՆ
ԽՉԱՐ
ԻՆ

Ս. ԿԱՆ˪Գ˩ՆԵՑԱՒ ՍԲ. ԽԱՉԵՐՍ
ԲԱՐԷԽԱՒ|Ս ՍԱԶ|ԱՐԻՆ,|ԱՆՆԻՆ,
Խ˪Ա˩ՉԱ˪ՏՈՒ˩ՐԻՆ:

Ծանոթ. *Ժամանակը որոշվում է կանգնեցնողների անուններով. Ազարիայի մահվան թվականն է 1513. հետևաբար դրանից առաջ։*

**346. ԽԱՉՔԱՐ,** *նախորդի մոտ, քիվին 1 տող։*

Ս̄ԲԽՉՍԲԱՐԷԽԱՒՍ ՍԱՐԳՍԻՆ

Ս̄Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՍԱՐԳՍԻՆ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին։*

**347. Ս. ԳԵՎՈՐԳԻ** *հյուսիսային պատի վրա, արտաքուստ եղել է նախկինում հետևյալ արձանագրությունը, որը մենք տեղում չգտանք.*

Կամաւն Աստուծոյ ես Ստեփաննոս քահանայ, որդի Կունցուզ ադին, շինեցի զշրջապատս եկեղեցւոյս, յիշատակ ինձ և մաւրն իմոյ Աղունին և եղբարց իմոց:

Ծանոթ. *Ստեփանոս քահանան այլ արձանագրությունների մեջ հիշատակված է 1557 թ. (Նորադուզում)։*

*Հրատ. Ջալալեան. II, 124։ Ալիշան, 42։ Սմբատեանց, 501։ Լալայան, XVIII, 122։*

## ՍԱՐՈՒԽԱՆ (ՆԱԽԿԻՆՈՒՄ ԴԱԼԻՂԱՐՏԱՇ)

*Գյուղի հին անունը մոռացվել է։ 1513 թվականին Տաթևի փաստաթղթին ստորագրած Գեղարքունիքի մելիքների և տանուտերերի ցանկում կա* Լճիկ որդի Պուտախին, թոռն Տել ուղարտաշին: *Ըստ երևույթին, Դելիղարդաշը այս գյուղի մելիքական տոհմի հիմնադիրն է և գյուղի անվանատուն։ Արձանագրությունների մեջ հիշատակված Մելիք Մալխասը և Մելիք Մանուչարը Դալիղարդաշի ժառանգներն են։ Այս վերջինս իր հերթին անվանատու է այն ընդարձակ սարադաշտին, որն ընկած է Գամոյի և Մարտունու շրջանների գյուղերի արանքում և կոչվում է «Մանուչարի դաշտ»։ Ջամբռի մեջ ևս գյուղի անունը Դալիղարտաշ է հիշված։*

*Գյուղում պահպանված հուշարձաններն ու արձանագրությունները* XVI *դարից ավելի հին չեն. դրանք միայն խաչքարեր ու տապանաքարեր են՝ դրված հասարակ, քարաշեն և կիսավեր Թուխ Մանուկ, ս. Գևորգ մատուռների պատերի մեջ, շուրջը կամ գերեզմանատանը։*

*Մեր ժողովածուում ամփոփված են 17 արձանագրություն, որոնցից միայն չորսն են նախկինում հրատարակվել։*